

Ս Ի Ո Ն

ԺԹ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1945

ՄԱՐՏ - ԱՊՐԻԼ

3-4

Դ Է Պ Ի Է Ջ Մ Ի Ա Ծ Ի Ն

Գերագոյն նորոգողը, Տէր Տեղակալի գլխաւորութեամբ, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը նշանակել է զարնանը կամ զարնան վերջերին: Որքան էլ շատերին, կարելի է, քիչ անյարմար թուի, պատերազմական այս թոճ ու բոհի ժամանակ այսպիսի մի գործի ձեռնարկել, եւ միջոցն էլ կարճ համարել նախապատրաստութեան համար, բայց երբ այդպիսի մի որոշումն է եղել, անշուշտ, իւր հիմնաւոր պատճառներն ունի եւ մենք պէտք է օգտուինք գեղեցիկ պատեհութիւնից:

Շատ երկար ժամանակ է, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Աթոռը թափուր է, եպիսկոպոսներ Մայր Աթոռում չկան, եղածները ցրուած են թեմերում, բիշ են եւ միաբանները: Եկեղեցու Պետի ներկայութիւնը կարող է զգալի չափով մեղմել այս վիճակը: Ապա ի վաղուց ծրագրուած են եւ սեղանի վերայ դրուած նաեւ ներքին բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներ, որոնք լուծման են սպասում: Նախընթաց պատերազմից յետոյ շատ են փոխուել պարագաները, որ պիտի ի նկատի առնուին: Այս եւ այսպիսի բազմաթիւ պատճառներ ստիպողական են դարձնում Ազգային-Եկեղեցական ժողովի գումարումը:

Արդ, ի՞նչ ունինք ժողովից առաջ կատարելու: Նախ՝ Առաջնորդի հետ, որ ի պաշտօնէ իրաւունք ունի մասնակցելու ժողովին, պիտի ընտրուին մի կամ աւելի աշխարհիկ պատգամաւորներ թեմի մեծութեան համեմատ: Պէտք է մտածել պատգամաւորների ճանապարհածախսի համար, որ պիտի հոգան ժողովուրդն ու եկեղեցիները, եթէ պատգամաւորներն իրենք յանձն չառնեն կամ չկարողանան իրենց գրպանից հոգալ:

Բայց այդ բաւական չէ: Յայտնի է Ս. Աթոռի նիւթական վիճակը. գնացող եպիսկոպոսներն ու պատգամաւորները պէտք է մտածեն ոչ միայն թեթեւացնելու Ս. Աթոռի վերայ ընկնելիք ծախսերը, ընդունելութիւն, հիւրասիրութիւն եւայլն, այլ եւ օգնել՝ նորա անձուկ վիճակն ի նկատի ունենալով: Արտասահմանի թեմերից Հիւսիսային եւ Հարաւային Ամերիկայի երեք թեմերը եգիպտոսի հետ, քնականաբար, ծանրութեան մեծ մասը իրենց վրայ պիտի առնեն. ապա Երուսաղէմի, Իրաքի, եւ Պարսկաստանի երկու թեմերը նոյնպէս, իսկ Ֆրանսայի եւ Բալկանեան պետութիւնների թեմերը ըստ հնարաւորութեան եւ կարողութեան: Գալով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Մեր ի սրտէ ցանկութիւնն է մի քանի եպիսկոպոսներով մասնակից լինել ընտրութեան եւ ժողովին: Մեր թեմերից միայն Հալէպն ու Բէյրութն են, որ աւելի զգալի չափով կարող են եւ պէտք է մասնակից լինին այդ ծախսերին, Գամասկոսն ու Կիպրոսը աւելի նուազ չափով:

Փոքր ինչ աւելի յաջող պայմաններում, ուզում ենք ասել ոչ պատերազմական, սա լաւագոյն առիթն էք, ոչ միայն պատգամաւորներով, այլ եւ հայրենաբաղձ անհատների խմբերով, ուխտի գնալ դէպի ն. Հայաստանը եւ դէպի Հայաստանեայց Եկեղեցու

հինաւուրց Մ. Աթոռը, հարուստ պատմական եւ սրբազան յիշատակներով : Ուրախ ենք շատ եւ երախտապարտ Ն. Հայաստանի Կառավարութեան, որ լայնախոհ կերպով արտօսել է այսպիսի դժուարին պայմանների մէջ անգամ կաթուղիկոսական ընտրութիւն կատարել, դիւրութիւններ ընծայելով, անշո՛ւշտ, պատգամաւորների ծանապարհորդութեան համար :

Պէտք է օգտուիլ այս գեղեցիկ պատեհութիւնից եւ ըստ կարելւոյն մեծ թուով գնալ, տեսնել աւերակների տակից նոր վերակենդանացող հայրենիքի վերելքը, մշակութային ամենատեսակ հաստատութիւնները, համալսարանը, մասնագիտական, երկրորդական եւ ժողովրդական դպրոցների ծաղկումը, հայ գրականութեան, արուեստի այլ եւ այլ ճիւղերի՝ ճարտարապետութեան, երաժշտութեան, նկարչութեան, արծանագործութեան նոր եւ յառաջադէմ ընթացքը : Տեսնել պետական կեանքով ապրել սկսող ժողովրդի կենցաղը, քաղաքների վերաշինումն ու յարդարումը, ճարտարարուեստի նորարդողը կեանքի երեւումն ու զարգացումը : Ամէն տեսակ հաստատութիւնների մէջ, դպրոցներում, դատարաններում, փողոցներում, խանութներում, ամենուրեք տեսնել մայրենի լեզուի տիրապետութիւնը, որպիսի՜ ուրախութիւն է հայրենասէր անձերի համար :

Պակաս ուրախութիւն կը լինի՞, տեսնել մեր թանկագին հայրենիքի ընական գեղեցկութիւնները՝ Արարատն ու Արագածը, Արարատեան դաշտի եւ երկրի երփներանգ եւ թովիլ տեսարանները, շուրջը պար ըռնած լեռներով. տեսնել բարձունքների վերայ Հայաստանի ամենամեծ գեղեցկութիւններից մէկը՝ Սեւանայ լիճը : Ապա նախնեաց թողած շէն կամ աւերակ, բայց միշտ խօսուն, կոթողները, նրանց ստեղծագործութեան եւ բարեպաշտութեան կենդանի վկանները, Զուարթնոցը, Հռիփսիմէի գոտրիկ վանքը, Գեղարդայ վիմափորները, Գառնիի Տրդատայ Թախտը Յունա-Հռոմէական ոճով, Անիի աւերակները, գոնէ հեռուից տեսնելով, իւր աննման մայր եկեղեցիով եւ հրաշալի, բարձր աշտարակներով պարիսպները, Զորագետի Հաղբատն ու Սանահինը, իրենց քաղմաստեսակ շէնքերով եւ կատարած դերով մեր արուեստի, գրչութեան եւ մշակոյթի պատմութեան մէջ :

Որպիսի՞ խորը եւ իրական տպաւորութիւններով եւ տեղեկութիւններով կը վերադառնան նրանք իրենց տեղերը, զեկուցումներով, յօդաւածներով եւ առօրեայ խօսակցութիւններով ընկերցողների եւ ունկնդիրների մէջ պայծառ գիտակցութիւն եւ նորա հետ կապուած զգացմունք զարթեցնելով դէպի Հայրենիքն ու եկեղեցին :

Բայց զարթութիւնից գնացած պատգամաւորների ներկայութիւնը ընտրութեան եւ ժողովին՝ կ'ունենայ կարեւոր նշանակութիւն եւ Հայաստանի Հայութեան համար : Նոքա կը զգան եւ կը տեսնեն մեր եղբայրական կապը ազգի ամբողջութեան հետ, որի արմատն ու բունը Հայրենիքի Հայութիւնն է, բայց նաեւ հաւատացեալ Հայութեան համար, Եկեղեցու միութեան տեսակէտով : Հաւատացած ենք, որ մեր պատգամաւորների ներկայութիւնը յրեւանում եւ էջմիածնում անսահման ուրախութեան եւ ոգեւորութեան պատճառ կը լինի եւ բուն Հայրենիքի Հայութեան համար :

Ուրեմն, դէպի Հայաստան եւ Ս. Էջմիածին, որքան կարելի է, մեծ թուով :

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԸՆՏՐԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՏԱՆՆ ԿԵԼԵԿԵՈՅ

Մովի վերայ, Փետրուար 1945